

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԺՆՈՒՆԳԸ
ԵՒ
ՀՈԳԵՇՈՒՆՉ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ՊԱՏԿԵՐ ՄԸ

**SPIRITUALLY INSPIRED ANALYTICAL
REFLECTIONS OF CHRISTMAS**

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
2001

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Սուրբ Ծնունդը տօնն է Աստուծոյ Որդւոյն մեծաբանչ Մարդեղութեան: Անոր Մարդեղացուը վերածնունդ տալու է մեզմէ իւրաքանչիւրի սրտին յարածամօրէն: Յիսուսի սուրբ Ծննդեան տօնը, Անոր մարդեղացման տօնն է՝ Աստուածայայտնութեան տօնն է և ոչ Անոր գոյութենականութեան: Ան կ'ուզէ մարմնանալ նաեւ մեր մէջ այնպէս ինչպէս մարմնացաւ աշխարհի: Ան կը կանչէ մեզմէ իւրաքանչիւրը, ըսելով. *«Էկո՛ւր էանէս»*: Արջալոյսի գրկէն, Բերովբէից թեւերուն վրայէն, ձօրը ծոցէն վար իջաւ Լոյս ի Լուսոյն:

Յիսուսի Ծնունդին սակաւթիւ անձեր եկան հիւրասիրել Ձին՝ հովիւներ և հեռաւոր մոզեր: Ո՞ւր էին աստուածաբաններն ու հոգեւորականները: Ո՞ւր էին իրենք զիրենք բարեպաշտ կարծողները: Հազարաւոր հրեաներէն միայն քանի մը հատը եկաւ: Յիսուս ծնաւ մարդո՛ց մէջ, ապրեցաւ մարդո՛ց մէջ, ուսուց մարդո՛ց մէջ: Մենք եւս ապրելու և գործելու ենք մարդո՛ց մէջ, ո՛չ միայն այսինչ class-ի մէջ, այլ իսաւր աշխարհի մէջ որպէսզի լուսաւորենք զանոնք: Ապրելու ենք մարդկութեան մէջ, խոնարհութեամբ, համբերութեամբ և սիրելով իւրաքանչիւրը, նոյնիսկ սիրելով չսիրուելիքը:

Ներհայեաց հոգեստեղծութեամբ ջանանք մտերմանալ Ա. Ծնունդի հրաշալի երոհւորդին: Անոր Մարդեղութիւնը կը կազմէ առանցքը Բրիտանոնեական հաւատքին: Ինչո՞ւ համար Ա. Ծնունդը կորսնցուցած է իր աւանդական իմաստը և անոր առանցքը եղող Յիսուս Բրիտանոն: Մարդիկ Ա. Ծնունդի անունով կը խօսին, սակայն Կաղանդ Պապան է տիրականը վանառատուներուն մէջ, ընտանեկան յարկերէն և սրտերէն ներս: *«Նորք Ա. Ծնունդը պարզապէս իր հոգեւոր իմաստէն ու հանդիսական միայն իրախճեանէ՛ր առիթ՝ կատարուած «Ծնուեալ է անուտով, կը դառնայ տղա-արդէութիւն»--Ն. Ուզունեան: «Իւրաքանչիւր ներհասարակ պէտք է կրօնով մը զգայ կամ տօանայ, և այդ կրօնովն իրագործմանը համար պէտք է պատրաստուի իր ներհասարակութեան գրեթէն»--Գարեգին Ա. Կաթ.*

Յիսուսին մեր մէջ մարմնանալուն նպատակը մեզ աստուածացնելու համար է:

Այսօր մեզմէ իւրաքանչիւրին հոգին Բեթլեհէմ մըն է, ուր ծնիլ կ'ուզէ Մարդեղացեալ Աստուած-Որդին Յիսուս:

*Ա. Ծնուեալը՝ Աստուածայայտնութեան,
Յիսուսի Մարմնացման, միաժամանակ՝
մարդու աստուածացման տօնն է:*

Փետրուար 16, 2006
Թորոնթօ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԳԸ ԵՒ ՀՈԳԵՇՈՒՆՉ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

1. Մովսէս մարգարէին մտայղացումներն ու կանխասացութիւնները որոնք արձանագրուած են Մանդոց Գրքին Յրդ գլուխ 8-15 համարներուն մէջ, կը պատկերեն մեր Տիրոջ՝ Յիսուս Բրիստոսի յալթանակը չարին դէմ և Սատանային վերջնական չէզոքացումը և փճացումը: Աստուած նախ կ'անիծէ Սատանան հետեւեալ խօսքերով.

***«Անիծեալ ըլլաւ, փոքիդ վրայ բալես, ու
կեանքիդ բոլոր օրերը հող ուտես»:***

Հող ուտել կը նշանակէ, ո՛չ թէ հողէն բուսածը, այսինքն հողին արտադրած բերքը՝ կեանք պարգեւող աշխարհի տարրական խոտը, այլ անկենդան նախանիւթը՝ կաւը և հողը ուտես: Այլ խօսքով, պիտի ուտես ա՛յն ինչ որ անսնունդ է, մի՛նչեւ ոչնչանալը: Դուն պիտի յարատեւես որպէս շնչաւոր կենդանի, սակայն ոչ կենդանիներու աշխարհին մէջ, այլ աւելի ստորին քան բուսական տարածութիւնը՝ որպէս սողուն պիտի ապրիս:

Յետոյ, որպէս նուաստացում և անարգանք, Աստուած կը նախաձայնէ Սատանային կրելիք ամօթահար պարտութիւնը.

***«Ան (կնոջ սերունդը), բու գլուխդ պիտի ջախջախէ,
և դուն անոր գարջապարը պիտի խայթես»:***

Այն դարաշրջանին մէջ երբ Մանդոց Գիրքերը կանոնագրուեցան, հերոսութիւնը՝ **ա՛յր** մարդու քաջագործութիւն կը նկատուէր ու ոչ **կնո՛ն** մարդու: Սատանան որ հոգեղէ՛ն ստեղծուած մըն էր՝ աւելի բարձր և զօրեղ քան հողեղէն մարդը, պիտի ջախջախուի ու պարտուի ոչ միայն հողեղէ՛ն էակի մը կողմէ, այլ՝ տկա՛ր և անզօր նկատուած **կնո՛ն** արարածի մը սերունդին կողմէ:

«Կնոջ սերունդ»ը, փոխաբերականօրէն, կը ներկայացնէ նաեւ Յիսուսի **կուսակա՛ն** ծնունդը: Յիսուս Բրիստոսի մարդեղութիւնը նախագուշակող և նկարագրող անդրանիկ մարգարէութիւնն է այս որ տեղի կ'ունենայ Եղեմի Պարտէզին մէջ:

Վերոյիշեալ տեսակցութիւնը և խօսքերու փոխանակութիւնը, որ կը կարծուի տեղի ունեցած ըլլալ Աստուծոյ, Սատանայի ու Ադամ-մարդուն միջեւ

Եղեմի Պարտեզին մէջ, ամենագեղեցիկ և հոգեզմայլ ներշնչումը կը պատկերացնէ մարդու շնորհուած Աստուծոյ պատկերին, Անոր Հոգիին և Շունչին: Առանց աստուածաշունչ Հոգիի, մարդ անկարող է խոյանալ դէպի հոգեղէն տարածութիւն և ականատես ըլլալ այն պատկերացումներուն և բացատրութիւններուն, որոնք կը գրգռեն մարդկային միտքն ու կը յուզեն անոր զգացումները:

Յունական իմաստասիրութիւնը *կոյրոնէք*, ճշմարտութիւնը, իսկ Աստուծոյ Հոգիին զօրութիւնը՝ կը ջնորհէ՝ և կը *յայտնէ՝* իմաստութիւնը: Մարդ երբ ինքզինք նուիրէ Աստուծոյ և հիւրընկալէ Անոր Հոգին իր հոգւոյն մէջ, ան բնագոյրաբար կը գիտակցի «յաւերժ զգայնութեան», թէ՛ անցեալի և թէ՛ ապագայի: Անցեալի և ապագայի գիտակցութիւնը մարդ արարածը կը դարձնէ յաւերժական:

Սրբազան գրութիւնները, մանաւանդ Սուրբ Աւետարանները, ակնադիւրն են սոյն ներշնչող մարգարէութիւններուն ու վախճանական գիտելիքներուն:

2. Եսայեայ մարգարէն կը մարգարեանայ ու կը յայտարարէ Յիսուս Քրիստոսի Ծնունդն ու Անոր Իշխանութիւնը: Մարգարէութիւն **Եսայի Թ. 2, 6-7** համարները կը Բողագերծեն անդենականի վարագոյրը և կը բացայայտեն աստուածային որոնումներու ուղեգիծը համայն մարդկութեան, ըսելով.

*«Վասնզի մեզի մանուկ մը ծնաւ, մեզի որդի մը տրուեցաւ,
էս իշխանութիւնը անոր ու սերուն վրայ պիտի ըլլայ,
Ո՛ր անոր անու նը պիտի կոչուի Ա՛հանչելի, Խորհրդակից,
Հզօր Աստուած, Տախտենականութեան Հայր, Խաղաղութեան
Իշխան:
Դաւիթի աթոռին վրայ ու անոր թագաւորութեան վրայ Անոր
իշխանութեանը մեծ նալու ն ու խաղաղութեանը տանձան չկայ».*

«Մեզի մանուկ մը ծնաւ»:--Աստուածային գործառնութիւնը ուղղակի-օրէն հակընդդէմ է մարդկային ձեռնարկութիւններուն: Որովհետեւ մարդ անզօր է, հզօրութեան մէջ ապահով կը զգայ ինքզինք: Որովհետեւ մարդ սկար է, պոռալով և գոչելով կը ջանայ արդարացնել ինքզինք: Ազգեր, ապահովելու համար իրենց պատերազմի յաղթական ելքը, բանակներու հրամանատարութիւնը կը վստահին զօրավարներու և ռազմավար անգութ հերոսներու:

Իսկ Աստուած, որովհետեւ ամենազօր է և Ի՛րն է յաղթանակն ու պայքարի վախճանական պատկը, լրութեամբ և անդորրութեամբ կը գործէ: Աստուած՝ անջշուկ լոյս մը վառելով կը վանէ խաւարը և տեսանելի կը

դարձնէ Ճշմարտութիւնը և Արդարութիւնը: Աստուած, կայծակներու և որոտումներու միջոցաւ չի խօսիր, ինչպէս Մովսէս կ'ակնարկէ ու Եղիա մարգարէն կ'ակնկալէ: Աստուած կը խօսի Իր Հոգիին ծունչով, քաղցրաշունչ մեղեդիով՝ այնպէս ինչպէս խօսեցաւ Պայծառակերպութեան պահուն Պետրոս, Յովհաննէս և Յակոբոս աշակերտներուն:

Մովսէս հրամայեց իր ցեղակիցներուն որ ո՛չ մէկը մօտենայ միացող ու որոտացող լեռան, որուն վրայ իջած էր Աստուած: Ոչ իսկ անասուն մը կրնար դաչիլ այդ կայծակնաբոց լեռան՝ առանց սպանուելու: Յիսուս ներկայացուց զԱստուած Իր աշակերտներուն՝ ոչ թէ որպէս զարհուրանք և սուկում ազդող Արարիչ մը, այլ՝ *սիրո՞ղ* Հայր մը: Զանոնք Ի՛ր հետ բարձարացուց հոգեւոր կատարը, և Ինքզինք՝ ցոյց տուաւ Իր աշակերտներուն պայծառակերպեալ հանգամանքով ու լսելի դարձուց աստուածային արտայայտութիւնը որպէս մեղեդի՝ երբ Երկնաւոր Հայրը խօսեցաւ ըսելով.

***«Ատիկա՛ է իմ սիրելի Որդիս, որուն հաճեցայ,
Ատո՛ր մտիկ ըրէք»--Մատթ. ԺԷ.5:***

Եսայի մարգարէն, ջեղելով իր ազգային աւանդական խոժոռ և պահանջկոտ Աստուծմէն, կը ստեղծէ դարձակետը սիրոյ և քաղցրահամբոյր Աստուածը: Փոխելով ժամանակակից ազգա-կրօնական "վրէժխնդիր և նախանձոտ" Աստուածը, որ՝

*«Կը հատուցանէր հայրերու և անօրէնութիւնը որդիներու և
վրայ, մինչեւ անոնց երրորդ ու չորրորդ ազգը».*

Երեմիա մարգարէն եւս միացնելով իր գովաբանութիւնը Եսայի մարգարէին նորատեսիլ յայտնութեան, կ'երգեհունէ ըսելով.

«Այն օրերը մէյմըն ալ պիտի չըսեն հայրերը ազօխ կերան,

և՛ որդիներու և անօրաները առին:

Հապա ամէն մարդ ի՛ր անօրէնութեանը համար պիտի մեռնի:

Ամէն մարդ որ ազօխ կ'ուտէ,

Անոր անօրաները պիտի առնեն»--Երեմիա ԼԱ.29-30:

Աստուածային տեսիլք յայտնութիւնը՝ Յիսուս Մանուկին, փոխակերպած էր Եսայի մարգարէին բովանդակ աստուածահայեացքը: Աստուած փոխանակ ճանչցուելու որպէս նախանձոտ և վրէժխնդիր, կը սկսի անուանակոչուիլ

***«ԱՔանչե՛լի, Խորհրդակից, Հզօր Աստուած,
Յախտենականութեան Հայր և Իշխան Խաղաղութեան»:***

Եսայի մարգարէն մօտ 500 տարիներ առաջ, Հին Կտակարանի մարգարէները տակաւին հաւատաւորներն էին վրէժխնդիր Աստուծոյ: Կարդանք Սամուէլի տիրական հրամանը ուղղուած Սաւուղ թագաւորին, ցեղասպան-

նելուն համար իրենցմէ տարբեր ազգութիւն մը.

*«Գնա ու Ամադէկը զարկ, և անոր բոլոր ունեցածը նզովուածի
պէս բնաջինջ ըրէ. ու անոր չխնայես. և այր մարդէն մինչեւ
կին մարդը ու տղայէն մինչեւ կայծերնորը, արջառէն մինչեւ
ոչխարը և ուղտէն մինչեւ էջը մեռցնես»--Ա. Քազ. ԺԵ.3:*

Մամուէլ մարգարէն որ իմացած էր Աստուծոյ ձայնը ու խօսած Անոր
հետ, որքա՛ն հեռու կը մնայ ճշմարտութեան թիրախէն, ու կը խարխափէ
անորոջ և տարտամ աստուածճանաչումի մէջ: Կրնա՞ք երեւակայել, եթէ Հրեայ
ժողովուրդն ու անոր մարգարէները սխա՛լ և աղօտ ճանչցած էին զԱստուած,
ո՛րք կը մնար հեթանոս կրօններու աստուածաբնութիւնը: Ո՞րք պիտի ըլլար
մարդկութեան հոգեզգայնութիւնը և պայծարատեսութիւնը եթէ Յիսուս
Քրիստոս չայգալոյսէր ու ճշմարիտ Աստուածը՝ Երկնաւոր Հայրը չյայտնէր
մարդկութեան:

Եսայի մարգարէով կը սկսի աստուածային անուան նոր յատկանիշ-
ները՝ *«ԱՅճանչելի, Խորհրդակից, Հզօր Աստուած, Տախտենակաւորութեան Հայր,
և Խաղաղութեան Իշխան* մակդիրները: Դիցազնօրէն ու աննկատ ազգային
աւանդութիւններու, մարգարէն կը սկսի վկայախօսել նոր աստուածբնութիւն
մասին, որուն թափանցելով ի յայտ պիտի գար Աստուծոյ սէրն ու Անոր
ողորմութիւնը:

3. Եսայի մարգարէն, որպէս ցայտուն բացատրական, կը ջարուանկէ իր
ներշնչող տեսիլները ու խանդավառելով իր ունկնդիրները, ազգակրօնա-
կա՛ն բուրմունքով կ'ըսէ.

*«Տեսնէի բուռն ջառագիղ պիտի ելլէ, և անոր արմատէն
ընէիւղ պիտի բուսնի.
Ու անոր վրայ պիտի հանգչի Տէրոջը Հոգին, Իմաստութեան ու
Հանճարի Հոգին, Խորհուրդի զօրութեան Հոգին, Գիտութեան
և Աստուծոյ վախիւն Հոգին.
Ու Անկյա Տէրոջը վախովը պիտի լեցուի.
Եւ իր աչքերու ն տեսածին համեմատ պիտի չդատէ,
Ու իր ականջներու ն լսածին համեմատ պիտի չյանդիմանէ.
Հապա աղբատին դատը արդարութեամբ պիտի տեսնէ.
Ու երկրին զրկուածներու ն համար իրաւամբ պիտի յանդիմանէ»
--Եսայ. ԺԱ.1-3, 4, 9:*

Որքան ալ աղօտ ըլլան նախա-Եսայեան մարգարէներու հայեցակէտերը
իրենց Աստուծոյն նկատմամբ, բաղդատական տարածութեան մէջ, իրենք
անհամեմատօրէն բարձր են ու վեհ: Որովհետեւ կարգ մը հեթանոս

աստուածապաշտութեան մէջ, սրբապղծութիւնն ու մարդագոհութիւնը ոչ միայն թոյլատրուած էին, այլ պարտադրուած: Վերոյիշեալ տեսանկիւնէն երբ դիտենք Եսայի մարգարէն և իր յաջորդները, անոնց ազգայնական ոգին հասկնալի կը դառնայ: Եսայի մարգարէն, կամայ ակամայ, գալիք Խաղաղութեան Իշխանը և աշխարհի նոր Բաղաբակրթութիւնը կը վերագրէ «Յեսսէի բունին» և «Դաւիթի Աթոռին»: Մարգարէն՝ ո՞ր ազգին կամ ո՞ր կրօնի հաւատացեալներու կրնար վերագրել իր տեսիլք յայտնութիւնը, այն հիաստանջ նոր դարաշրջանը որ պիտի արշալոյսէր մարդկային Բաղաբակրթութեան: Հելլենակա՞ն սրբապիղծ, թէ Փիւնիկեա՞ն մարդագոհ պաշտամունքներու պիտի ընծայէր գալիք «Իմաստութեան ու Հանճարի» Հոգիին Աթոռը:

Մարգարէն համառօտաբար ու վայելչաբանութեամբ կը բարեջրջէ հին օրինապաշտութիւնը երբ կ'ըսէ.

«Իր աչքերուն տեսածին համեմատ պիտի չդատէ, և իր ականջներուն լսածին համեմատ պիտի չյանդիմանէ».

Անկարելի կը դառնայ կարդալ վերոյիշեալ մարգարէութիւնը և չտեսնել մեր Յիրոջ Յիսուս Զրիստոսի իրաւ և արդար դատաստան տեսնելը երբ աւանդապաշտ աղանդաւորներ, Բազկուստելով կը բերեն ջնացող կին մը Յիսուսի, որ Ան մահուան վճիռը արձակէ: Այդ սրտաճմլիկ տեսարանին առջեւ, Յիսուս՝

***«Իր աչքերուն տեսածին համեմատ և
Իր ականջներուն լսածին համեմատ».***

դատաստան չի տեսներ, այլ *ուղղմութեամբ* և արդարութեամբ կը հրամայէ որ իրենց մէջի *անտողը* թող սկսի Բարկոծել այդ հե՛ք հոգեկան արկածեալը: Հաւատուրաց օրինամուկները խղճահարուելով կը հեռանան սոյն դատաստան հրապարակէն: Յիսուս կը մօտենայ, իր պատանեկութեան մէջ բունաբարուած ամօթահար իլեակին ու կը հարցնէ.

«Մ'վ կին, (ոչ պրունիկ) ո՞նք ես. ո՞չ ո՞ք դատապարտեց քեզ»: Կինը կ'ըսէ Յիսուսի, *«Մ'չ ո՞ք, Տէ՛ր»:* Յիսուս կը սեւեռէ Իր աչքերը այս կնոջ աչքերուն ու կը նշմարէ աստուածային կերպարը որ չէր ջնջուած դեռ, ու կ'ըսէ կնոջ, *«Ես ալ չեմ դատապարտեր քեզ»:* Յիսուսի վերոյիշեալ վճիռը, պէտք չէ կարծել որպէս մեղանջելու արտօնագիր: Նազովրեցի Մարգարէն անգամ մը եւս կը դիտէ գետնի վրայ ծնրադիր կինը որ ջալով մը ծածկած էր իր ամօթահար դէմքը, և կ'ըսէ կրկին.

«Գնա՛, այսուհետեւ մի՛ մեղանջեր»:

Ահաւասիկ այն Միածին Որդին՝ *Ճառագիտը* որ պիտի ելլէր *«Յեսսէի բունէն»*, պիտի գերազանցէ Մովսէսի դատաստանագիրքը և ի լոյս պիտի բերէ *Ճշմարտութիւնն ու Ընորհը:*

«Արովհեաել Օրէնքը Մովսէսի միջոցով, իսկ շնորհն ու ճշմարտութիւնը Յիսուս Բրիստոսի միջոցով եղան»--Յով. Ա.17:

4. Բանաստեղծ և տեսանող Եսայի մարգարէն կը դիտէ աստուածային **միջամտութիւնը** Հրեայ ազգին, տարագրութեան ընդմէջէն: Մարգարէն հաւատուրաց բանաստեղծ մը չէ՛, նման Լթոյ դարու բանասերներու և գրականագէտներու, այլ անխախտ հաւատփի տէր կրօնաւէր մըն է: Բաբելոնի իր ազգակիցներուն ափսոսն ու պատիժը, փոխանակ *ուրբերգութիւն* համարելու, անոնց գաղթականութեան մէջ իսկ, ան կը տեսնէ յոյսի և ազգային վերածնունդի հեռանկարը: Եսայի մարգարէն հակառակ իր խորագննին տեսանողութեան, կը շփոթէ Յիսուսի Առաջին և Երկրորդ Գալուստը իրարու հետ ու կը տաղերգէ աշխարհի զարթունցիչ վերակազմութիւնը Յիսուսի *մէկ ու միանգամ* յայտնութեամբ:

Հին Կտակարանի մարգարէներուն յատուկ է իրարու հետ շփոթել մեր Տիրոջ Յիսուս Բրիստոսի Ծնունդը (Մարդեղութիւն), Խաչելութիւնը, Յարութիւնը և ապագայ Երկրորդ Գալուստն ու Երկինքի Թագաւորութիւնը իրարու հետ: Մինչեւ Յիսուս Բրիստոսի Մարդեղութիւնը, համայն աշխարհի կրօնաւէր և անկեղծ հոգիները, ճառեցին ու մարգարէացան Փրկիչի մը մասին, որ պիտի կոչուէր Աստուծոյ-Որդի, սակայն իրենց կանխասացութիւններն ու գուշակութիւնները՝ շարունակ աղօտ էին մինչեւ երեւումը լուսահանդերձ Գալիլիացիին, որ ցայտուն ու ջօջափելի բացատրութեամբ դարձաւ Հին Կտակարանին **Մէկնաբանը**: Աստուածաւէր ու աստուածանուէր նոր Դարաջրջանը կարիքը ուներ աստուածայայտնիչ Յիսուս Մարդեղեալին:

Փոթորիկներ և ձիւնամրրիկներ երբ պատահին ու լոյսերը մարին, մանաւանդ իրախճանքի կամ հանդիսութեան մը ընթացքին, ի՞նչ վհատեցուցիչ հանգամանք կը ստանայ այդ հաւաքոյթը: Ժամ մը կամ պահ մը յետոյ երբ լոյսը վերադառնայ, ամէն ոք կը շարունակէ իր ընթացքը առանց նկատի առնելու ուրիշները:

Մարգարէաջունչ բանաստեղծը չ'ըսեր, «ճարունակէ՛ կերուխումը, պարը և ուրախութիւնը *բանգի բու լոյսդ եկաւ*», այլ՝ կը յորդորէ ու կը պատուիրէ ժողովուրդին ըսելով.

«Ելիր լուսաւորէ՛, Բանգի Բու լոյսդ եկաւ»:

Անձնասիրական ու կրաւորական նպատակի համար չէ՛ Բեզի ընծայուած լոյսը: Մարդ էակին ունեցած մտքի և հոգիի լուսաւորումը, իմաստութիւնն ու կորովը, պարգեւներ են բաժնեկցելու իրմէ նուազ ունեւորներու հետ ու պէտք չէ սեփականացնել զանոնք: Հոգեջունչ տաղերգողին պատուէրը՝ **ու ետարանե՛լ** է.

«Ելի՛ր լուսաւորէ», եղի՛ր օգտակար թէ դրացիիդ և թէ օտարականին,

«ԵԼԻՐ ԼՈՍԱՆՈՐԷ», եղի՛ր օգտակար թէ դրացիիդ և թէ օտարականին, որովհետեւ աստուածային դիտանկիւնէն՝ թէ՛ *հարեանոյ* և թէ՛ *օտարական*, սեպածո՛ղ՝ բու *եղբա՛յրդ* է:

5. Աւետարանիչ Եսայի բանաստեղծէն եօթը դար յետոյ, Հրեայ ժողովուրդը կ'ապրէր բռնագրաւուած հայրենիքի մը մէջ, ուր Մամարացի խառնածին-հրեաներ ու Հրեայ աւանդապահներ իրարու թշնամիներ էին: Մեծն Հեբովդէս կը թագաւորէր ամբողջ Հրեաստանի վրայ: Ան հռչակաւոր էր իր ջինարարական գործերովը: Ինքն վերակառուցած էր Մողոմոնի տաճարը, աւելի մեծ և գունագեղ մարմարներով: Տաճարը և անոր համալիրը կանգնած էին Երուսաղէմ ֆաղափ կեդրոնը որպէս աղօթատուն բարեպաշտ հաւատացեալներու: Այս կոթողական կառոյցը, իր բոլոր ճածանչագեղ բարձրութեամբ տիրական էր, սակայն Աստուծոյ Խօսքը չէր լսուեր: Ձկար մարգարէ ու չկար աստուածային Պատգամ:

Հոգեկան այսպիսի սովամահ ժամանակաշրջանի մը մէջ, Գաբրիէլ հրեշտակը Աստուծմէ կը դրկուի Գալիլիոյ մէկ ֆաղափը, որուն անունը՝ Նազարէթ էր: Աստուած, կարծես կ'անտեսէ մեծութիւնն ու յառաջդիմութիւնը: Հոռմ, Աղեֆասնդրիա, Աթէնք և Անտիոք կեդրոնական մայրաֆաղափներ էին արեւտուրի, ֆաղափակրթութեան, իմաստասիրութեան, մշակոյթի, կրօնքի և արուեստի:

Վերոյիջեալ բոլոր ֆաղափները ունին իրենց արաւելութիւնները, սակայն աստուածային նկատողութիւնը կը փնտռէ *սրբութիւնը*: Ո՛չ միայն մարմնական անապականութիւն, այլ նաեւ հոգիի, մտքի և երեւակայութեան սրբութիւն:

Գաբրիէլ հրեշտակ սուրհանդակը՝ աստուածային բարի կամեցողութեամբ կու գայ Գալիլիացիի մը տնակին դրան առջեւ ու կը պրպտէ երանելի կոյս Մարիամը: Աջխարհի մէջ կային հազարաւոր կոյսեր, խելացի կոյսեր, աշխատասէր կոյսեր և նոյնիսկ Հոռմ ֆաղափի սուրբ կանթեղը պաշտպանող կոյսեր: Աստուծոյ փնտրածը ոչ միայն մարմնակա՛ն կուսութիւնն է, այլ հոգիի՛ն կուսութիւնը: Այն աննիւթական ու հոգեւոր խորհրդաւորութիւնը, որ մարդկային ինքնութիւնն ու անձնաւորութիւնը կը կազմեն, ա՛յդ սրբութիւնն ու կուսութիւնն է, որ Աստուած կը փնտռէ *խրա՛մանցիւք*: Էակի մէջ:

Յիսուս՝ Ի՛ր իսկ համբուրելի քերնով ֆարոգեց ըսելով.

«Երանի անոնց որ սուրբ են սրտով, վասնզի անոնք գԱստուած պիտի տեսնեն»:

Ոչ թէ Աստուած զիրենք պիտի տեսնէ, այլ անո՛նք պիտի տեսնեն Ձինքը, որովհետեւ Աստուած կ'երեւի սրբացա՛ծ հոգւոյն հորիզոնին վրայ:

Գաբրիէլ հրեշտակ կ'աւետէ երանելի Կոյս Մարիամին հետեւեալ բարեւով.

«Ողջոյն Բեզի, ով շնորհընկալ Կոյս, Տէրը Բեզի հեա է»:

Գրաբար Թարգմանութիւնը կ'ըսէ.

«Աւրախ եղիր, ո՛վ **բերկրեալ**» փոխանակ **«ողջոյնի...»:**

Ինչո՞ւ Գալիլիացի Կոյս Մարիամը եղաւ շնորհընկալ Տիրամայրը և ոչ ուրիշ Կոյս մը, մենք չենք կրնար գիտնալ: Աստուծոյ ընտրեալը չենք կրնար բննադատել, միայն կ'ընդունինք թէ Աստուծոյ բով աչառութիւն չկայ:

Մեծագոյն երաշխիքը գոր որևէ մարդ-արարած կրնայ լսած ըլլալ, պէտք է ըլլայ հետեւեալը. **«Տէրը Բեզի հեա է»:** Ի՞նչ մեծ օրհնութիւն է զգալ և գիտնալ Աստուծոյ Ներկայութիւնը:

Հրեշտակին անակնկալ ողջոյնը այնքա՛ն խոտկեցուց Մարիամը, որ ակամայ վրդովումի նշաններ յայտնուեցան անոր դէմքին վրայ: Հրեշտակը կրահեղով Մարիամի յուզումը՝ զինք հանդարտեցուց ըսելով.

«Մի՛ վախնայ, Մարիամ, վասնզի Աստուծով՛ք ջնորհե՛ք գտայր. անա՛ պիտի յղանաս և որդի մը պիտի ծննիս և անոր անու նը Յիսուս պիտի կոչես: Ան մեծ պիտի ըլլայ ու հարձրեալին Տրոյին պիտի կոչուի».

Քրիստոնէական դարաշրջանը կը սկսի

ա.--**«Մի վախնայր»** ով:

բ.--**«Ծնորհ** գտնելով»:

Մինչեւ յայտնուիլը Մարդեղեալ Նագովրեցիին, աստուածային որդեգրութիւնը, ըստ մարգարեական խօսքին, *անընդազործութեամբ* էր: Քրիստոսէ սկսեալ, հաւատքը, որդեգրութիւնը և յաւիտենական կեանքը դարձած են **շնորհ**: Ոեւէ մարդ էակ կ'արժանանայ սոյն երանութեան եթէ իր ազատ կամբով ընդունի աստուածային ձրի պարգեւը, հաւատայ և սիրէ զԱստուած:

Սբ. Հոգւոյն հրաշագործ գօրութեամբ, Կոյս Մարիամ կը ծնի Յիսուսը: Նոյնպէս՝ մեղաւոր մը ապաշխարելով, և Սբ. Հոգւոյն ներգործութեամբ կը ստանայ հոգեփոխութիւն և կերպարանափոխութիւն, որուն Յիսուս կու տայ *«Վերստին Մնու նո՛յ՛»* մակդիրը: Ինչ որ ներկայ հոգեբանութեան գիտութիւնը անկարելի կը գտնէ, Սբ. Հոգւոյն գօրութիւնը կ'իրագործէ, Սօղոսը՝ Պօղոսի վերածելով և Օգոստինոս աղանդաւորը՝ Սբ. Օգոստինոս վարդապետի:

Գալիլիացի Մարիամ, մինչեւ իր այդ տարիքը կարողացած էր պահել իր պատիւը և մարմնական ու հոգեկան կուսութիւնը: Մարիամ, Հրեշտակէն երբ կ'իմանայ իր յղացումը, այլայլած կը հարցնէ անոր թէ ինչպէ՞ս կարելի է այդ, երբ ինք ամենայն պատուախնդրութեամբ պաշտպանած էր իր կուսութիւնը: Վերոյիջեալ տեսանկիւնէն դիտուելու է Մարիամի հարցումը.

«Ինչպէ՞ս կրնայ պատահիլ ինձի ատիկա, քանի որ ես այդ մարդ չեմ ճանչնար».

Երանելի Մարիամին հարցումը, տարակոյսի արդիւնք չէր նման Ձաքարիա Բահանային (Յովհաննէս Մկրտիչին հօր), այլ ան բացատրութիւն կ'ուզէր հրեշտակէն իր կուսական ուխտին նկատմամբ: Պէտք չէ մոռնալ թէ, որպէս հանրային կարծիք, ոմանք, իր կուսութեան ուխտին հաւատարիմ Մարիամը միջոտ կասկածով դիտեցին որպէս բարոյապէս թոյլ անձնաւորութիւն մը:

Բազմաթիւ անգամներ, անոնք որ շնորհի արժանացած են Աստուծոյ առջեւ, անարգուած են մարդոց առաջ: Հրեշտակը հասկնալով հե՛ք կոյսին հարցման շարժառիթը, զինք կը հանդարտեցնէ ու կը վստահեցնէ ըսելով.

«Անարք Հոգին պիտի գայ Բու վրայ, և Բարձրեալին զօրութիւնը հովանի պիտի ըլլայ Բեզի, որովհետեւ Ան որ Բեզմէ պիտի ծնի սուրբ է և Աստուծոյ Տրոյի պիտի կոչուի»:

Արդի գիտնականներ, իրենց *մակերեսային* գիտութեամբ, կը կարծեն հասկցած ըլլալ ամէն բան, ու երբ կարդան հրեշտակին վերոյիշեալ պատասխանը, Բմծիծաղ մը կը դրոշմուի իրենց դէմքին վրայ: Բոլոր անոնք որոնք չեն հաւատար գերբնականին և հրաշագօրութիւններու, ինչպէ՞ս կը հաւատան բնական ծնունդի հրաշագործութեան, որ ինքնի՛ն *բնակա՛ն-* ծնունդը հրաշագործութիւն է և գերբնական զօրութեան արդիւնք: Երբ բնական յղացումն և բեղմնաւորումը անբացատրելի է, ինչպէ՞ս բացատրել գերբնականը: Ինչպէս բնական յղացումի բացատրութիւնը անհասկնալի է ժողովուրդներու մեծամասնութեան, նոյնպէս է նաեւ կուսական յղացումի բացատրութիւնը կարծեցեալ գիտնականներու: Իսկութեան մէջ, "կուսական ծնունդը ո՛չ թէ բացատրութիւն չունի *արդէ՛* մարդուն, այլ՝ *արդէ՛* մարդը հրաշագործութեան բացատրութիւնը *հասկնալով՝ կարողութիւնը* և համեստութիւնը **չունի**...:

Մարիամ Կոյսի շնորհընկալութիւնը կը յայտնուի, հրեշտակին հետ իր ունեցած վերջին անձնատուութեամբ՝ երբ ան կ'ըսէ.

*«Ահա ասիկ Տիրոջը աղախինն եմ ես,
Բու խօսի՞դ համաձայն թող ըլլայ ինծի»:*

Մեզմէ Բանինե՞ր պիտի ուզեն անարգուիլ հանրային կարծիքին կողմէ կամ որպէս անպարկեշտ, ետ ըլլալ նշանածէ: Ահաւասիկ իսկական հերոսուհի մը, որ անվախ ու անվեհեր կը նուիրէ ինքզինքը, իր պատիւը և իր ներկան՝ սպասաւորելու համար Երկնաւորին Կամբը: Այս է պատճառը որով կ'արդարանայ Ս. Մարիամի օրհներգութիւնը.

*«Իմ անձն պիտի փառաւորէ Տէրը. և իմ հոգիս ցնծաց իմ
Քրիկիչ Աստուծմովս, որովհետեւ ան իր նայուածքը դարձուց*

իր աղայիկին խոնարհութեանը վրայ: Եւ անա, այսուհետեւ բոլոր սերունդները երանի պիտի տան ինձի, որովհետեւ Հոգորդ մեծամեծ գործեր ըրաւ ինձի համար, և Սուրբ է Անոր Անու նրա--Ա.46-50:

6. Մատթէոս Ա.18-25:

Մատթէոս Աւետարանիչ կը պատմագրէ Յիսուսի Ծնունդը՝ Մարդեղութիւնը:

«Մարիամ...Սուրբ Հոգիէն յղացած վիճակի մէջ գտնուեցաւ».

Փոխաբերական ակնարկութեամբ, մենք՝ մարդ արարածներ, ուրկէ՞ կը ստանանք մեր խորհուրդներու յղացումները: Սուրբ Հոգի՞ն է ակնադիւրդ մեր խորհուրդներուն, թէ Մատանան:

Ըստ Հրէական օրէնքին՝ նշանածները օրինական ամուսիններ կը նկատուէին, սա տարբերութեամբ՝ որ իրարու հետ միասին մէկ յարկի տակ չէին կենակցեր: Ամուսնութիւնը իր լրումը կը գտնէր՝ երբ փեսան իր տունը տանէր հարսը: Յովսէփ դեռ իր հարսը՝ Մարիամը իր տունը չտարած՝ կը նշմարէ Մարիամի յղութիւնը, ու այլայլած կը խորհի գաղտնի կերպով զայն արձակել:

Տէրոջը հրեշտակը տեսիլքի մէջ կ'երեւնայ անոր և կ'ըսէ.

«Յովսէփ, Դաւթի որդի, մի՛ վախճար բովոյ առնելու կինդ՝ Մարիամը, որովհետեւ անոր յղութիւնը Սուրբ Հոգիէն է».

Վերոյիջեալ համարը կը յայտնացուցանէ աստուածային միջամտութիւնը մարդկային գործառնութիւններուն մէջ: Չենք գիտեր ինչո՞ւ աստուածային միջամտութիւնը յարածամ չէ մարդոց գործունէութեան մէջ: Սակայն հակառակ մշտնջենական չըլլալուն, բացառաբար է՝ ու կայ:

Աստուածային հերթական միջամտութիւնը՝ ապացոյց է, որ աշխարհ անմիտ և կոյր գօրութեան մը քամահաճոյքին լքուած լաստ մը չէ, այլ անոր վրայ Հսկիչ մը կամ Պահապան մը կայ: Աստուածային միջամտութիւնը՝ նման է խաւար մթութեան մէջ փայլատակող լոյսի: Լոյսը ներջնչարանն է յոյսի և կեանքի: Պատահական միջամտութիւնը, որ կը պլպլայ ներկայիս, իբր օրինակ ծառայող նշմարն է գալիք Աստուծոյ Թագաւորութեան և անոր յարթական վարչաձեւին: Այս Թագաւորութեան մասնակցելու և Բաղաբացիանալու միակ պայմանը **հաւատա՛լ** է Աւետարանին:

Աստուածային միջամտութիւնը բնորոշող ամենացայտուն մարգարէութիւնը տաղերգուած է հետեւեալ բառերով.

«...Եւ Զայն պիտի կոչեն. Էմմանուէլ, որ կը թարգմանուի Աստուած մեզի հետ», գրաբարը՝ «ընդ մեզ Աստուած»:

Վերոյիջեալ "Աստուած մեզի հետ, կամ "Աստուած հետդ ըլլայ" բառերը արձագանգած են դարէ դար մինչեւ մեր օրերը: Ողջերթի մը պահուն, երբ մեր սիրելիներէն մէկը պիտի ճամբորդէ, կ'ըսենք, "Աստուած հետդ ըլլայ": Այլ

խօսվող աստուածային միջամտութեան կը վստահինք զինք:

Աստուածային սիրոյ և խնամակալութեան գործնական միջամտութիւնը կը պարտինք Յիսուսի Ծնունդին և Անոր Մարդեղութեան, որ մեզի յայտնեց Աստուծոյ հոգատարութիւնը Իր ապրումով և կեանքով: "Էմմանուէլ" բանաստեղծական բառ ըլլալէ դադրեցաւ ու դարձաւ *յոյսի և գոյատեւման Առջիւր* կոյրերու, կաղերու, բորտոններու և հոգեպէս ընկճուած մեղաւորներու համար: Լոյսեր հագած Նազովրեցին կերտեց պատմութեան մեծագոյն անկիւնադարձը, ներհնապէս կերպարանափոխելով պոռնիկը՝ սրբութեան, մաքսաւորը՝ բարերարի, Զինք ուրացող Պետրոսը՝ անձնագոհութեան և թերահաւատ Թովմասը՝ առաքելի:

7. Ղուկասու Աւետարան Բ.8-16:

Յիսուս Մանուկին առաջին երկրպագուները եղան փոռոհին անբան անասունները և ոչ մարդիկ: Մինչեւ Յիսուսի յայտնութիւնը, մարդիկ ծնրադրած ու երկրպագած էին անասնակերպ աստուածներու: Յիսուս Զրիստոսի ծնունդով պիտի վերջանայ կրապաշտութիւնը, որովհետեւ Աստուած Ինք որպէս Հոգի պիտի բնակի մարդոց սրտերէն ներս:

Յիսուսի յաջորդ այցելուները եղան հովիւները, պահապանները անասուններու: Անոնք եկան տեսնելու Հովիւը, որ պիտի հովուէ ոչ թէ գառնուկներ, այլ մարդ-արարածները: Պիտի հովուէ և ազատագրէ մարդիկը չարէն ու մահէն, ոչ թէ զանոնք կլթելու և խուզելու համար, այլ ջնորհելու Իր իսկ Մարմինն ու Արիւնը անոնց որպէս յաւերժութեան Մանանայ:

Հրեայ ազգին առաջին թագաւորներն ալ, իրենց ժողովուրդին հովիւ ըլլալէ առաջ, հովիւ էին անասուններուն--Մովսէս Օրէնսդիրն ու Դաւիթ թագաւոր: Յիսուս՝ որպէս Բարի Հովիւը մարդկութեան, պիտի չգործածէ սուր ու նիզակ ինչպէս Սաուղ և Դաւիթ թագաւորները գործածեցին, այլ պիտի հովուէ և առինքնէ զանոնք Իր հմայագեղ Սիրով և անձնագոհ սրբարար Խաչելութեամբ:

Մարդկային ըմբռնումով ինչքան հակադրութիւններ կ'երեւին Յիսուսի Ծնունդին մէջ: Ինչո՞ւ տիեզերքի ճարտարապետը՝ Յիսուս մարմնանար և ծնէր փոռոհի մը անշուք մէկ անկիւնը, կեղտոտութեան և գարջահոտութեան մէջ, երբ ազան և վայրագ թագաւորներ կը սպասաւորուէին մարմարեայ պալատներու մէջ: Ինչո՞ւ Աստուծոյ Որդին խանձարուրով փաթթուի, երբ Իր Բահանաները բեհեզազգեստ կը պտըտին...:

Աստուածային գործառնութեան մէջ բացայայտ է այս հակընդդէմ գործընթացքը: Պէտք է մոռնալ, սակայն որ հակադրութիւնը ո՛չ թէ Աստուծմէ է կամ Անոր գործունէութեան մէջ է, այլ՝ մե՛ր ընթացքը, մե՛ր ձեւը սխալ է և ապօրէն: Մարդ կը գործէ և կ'ապրի *անէ նայիցրայա՛ն* վայելքի համար միայն, իսկ Աստուած կ'աշխատի ուրի՛շը գոհացնելու, ուրի՛շը ուրախացնելու և ուրի՛շը խնամելու համար:

Աստուած՝ Ինֆզինֆը, Իր սերն ու ողորմութիւնը դիւրահաղորդ և մատչելի ընելու համար համայն մարդկութեան, խոնարհեցուցած է Իր Անձը: Իր արտայայտիչ դիմագիծը՝ Յիսուս Որդիին ծնունդին ու Անոր ապրումին մէջ կը տեսնենք: Մարդկային գանգուածին մեծագոյն մասը թէ՛ անբախտ է և թէ թշուառ: Այդ իսկ պատճառաւ, անտարանաջունչ առաքեալը կը գրէ.

«Յիսուս Իր անձը ու նայնացուց ծառայի կերպարանք՝ առնելով, մարդոց նման ըլլալով և կերպարանքով իբրեւ մարդ ճանչցուելով խոնարհեցուց ինֆզինֆ»--Փիլիպ. Բ.7:

Յիսուս՝ Իր խոնարհ կենցաղով ու կեանքով ոչ միայն կը փարզէ, այլ կը նկարէ և կը պատկերացնէ Իր պատգամները: Աշխարհի բոլոր կրօնները, անցեալի և ներկայի, *պարտադրած* են իրենց հետեւորդները և պահանջած են իրենց հաւատացողներէն, որ անո՛նք իրենք զիրենք գոհեն: Մի միայն մեր Տէրը, Յիսուս Զրիստոս է, որ ընծայեց Ինֆզինֆ համայն մարդկութեան համար:

Գիտարուեստի և ելեկտրոնագէտ (Electronics), մարդ էակը չի կրնար ներթափանցել հոգիին գաղտնարանները, ան կարիքը ունի *հաւատքի* որ իր հոգիին աչքն է:

8. Մատթէոս Բ.1-11:

Արեւելիի Մոզերը առաջնորդութեան երկնակամարի լուսաճաճանչ Աստղով մը: Մոզերը եկան Երուսաղէմ և ըսին.

«Ո՛րք է չըբաներու Արքան որ ծնաւ, վասնզի Անոր աստղը տեսնա՞ք Արեւելիի մէջ և եկանք՝ անոր երկրպագելու».

Յիսուսը մատնացոյց ընող Աստղը, թէեւ երեւցած էր Արեւելիի երկնակամարին վրայ, սակայն երեւելի էր ան, նաեւ Արեւմտեա՛ն երկնակամարի վրայ ալ: Ո՛րք էին իրենք զիրենք *“ընտրեալ”* կարծող չըբաներու Բահանայապետները, դպիրները և աստուածաբանները: Ի՞նչ կը դիտէին անոնք որոնք հպարտ էին իրենց կրօնական աւանդութեամբ և սրբազան մատենագրութեամբ: Ո՛րք էին չըբայ կրօնամուկները և աւանդապահ դպիրները, ինչո՞ւ օտար, հեթանոս և կռապաշտ յորջորջուածներ միայն նշմարեցին Յիսուսացոյց Աստղը: Վերոյիջեալ մոզերը անխախտ հաւատաւորներն էին իրենց Աստղին: Անոնք չեկան Երուսաղէմ թերահաւատութեամբ, այլ անսասա՛ն հաւատքով, որովհետեւ իրենց հետ կը բերէին իշխանական ընծաներ, ոսկի, կնդրուկ և զմուռս:

Մոզերուն միակ սխալանքը այն եղաւ որ թողուցին զիրենք առաջնորդող Աստղը ու դիմեցին Հերովդէսի պալատը: Յուսալով որ չըբաներու Արքան կրնայ ծնիլ միայն թագաւորանիստ պալատին մէջ: Ի՞նչ յուսալում էրք իմացան որ արքայական պալատին մէջ ոչ մէկ ծնունդ տեղի ունեցած է: Ու

երբ դուրս ելան պալատէն ու սեւեռեցին իրենց աչքերը դէպի երկնակամար, հո՛ն, կրկին երեւցաւ իրենց այն աստղածին լոյսը, որ զիրենք առաջնորդած էր մինչեւ Երուսաղէմ: Կարդա՛նք Մոգերու ապաշխարութիւնը, (ապաշխարութիւնը միջոտ ուրախութեան կ'առաջնորդէ):

«Երբ Աստղը տեսան՝ չափազանց ուրախացան»:

Մարդոց ուրախութիւնը և սրտի խաղաղութիւնը, յարատեւօրէն կու գայ երկինքէն: Արեւելքի Մոգերը վերադարձան իրենց նախկին երկնառափ Առաջնորդ՝ Աստղին.

«Էս անա այն Աստղը զոր տեսած էին արեւելքի մէջ, առաջնորդեց զիրենք, մինչեւ որ եկաւ կեցաւ այն տեղւոյն վրայ, ուր կը գտնուէր Մանուկը: Էս երբ տու նր մտան՝ տեսան Մանուկը Իր մօրը Մարիամի հետ, և երեսի վրայ իյնալով՝ երկրպագեցին Աստղ»:

Ուղտապան Մոգեր երբ դուրս ելան Հերովդէսի մարմարաջէն պալատէն, յուսահատ էին և յուսակտուր: Մակայն երբ տեսան Յիսուս Մանուկը ոչ թէ շարունակեցին յուսակտուր մնալ, այլ ***«երեսի վրայ իյնալով՝ երկրպագեցին Աստղ»:*** Ահաւասիկ անկեղծ ու անվեհեր հաւատացեալներ, որոնք առանց տեսնելու հրաշագործութիւնները՝ Լազովրեցի Մարգարէին, առանց իմանալու *«Երանելիներ»* ը՛ Լերան Քարոզին, առանց ականատես ըլլալու Խաչեցեալի Յաղթական Յարութեան, կ'երկրպագեն Մանուկ մը, որ կը գտնուի պարզ տնակի մը մէջ՝ ջրջապատուած անգարդ գեղջկուհիի մը սրբութեամբ միայն:

Յօրդ դարու մարդկութիւնն ալ կը հետեւի աստղերու: Հովիվուտի՛ աստղերու, Ֆութպոլի՛ աստղերու, արուեստի՛ աստղերու և հեռատեսիլի՛ աստղերու: Դէպի ո՛ւր կ'առաջնորդեն փոր, հակափոր և սրունքներ ցուցադրող աստղերը ներկայ ժողովուրդները, մանաւանդ նորաբողբոջ պատանիներուն մտածողութիւնը, դէպի ճշմարտախօսութի՞ւն և արդարամտութի՞ւն, ողորմածութի՞ւն և սէ՞ր հանդէպ ընկերներու և օտարներու: Թէ նոր սերունդը կ'առաջնորդուի դէպի սպանութիւն և ոճիր, բռնաբարում և գողութիւն, հեջտութի՞ւն ու պրոնկութիւն:

Որպէս ծնողք և դաստիարակ, որքա՛ն փութաջան ըլլալու ենք ցոյց տալու ճշմարտութեան և սրբութեան Աստղը մեր նոր սերունդին: Այս է այսօրուան հրատապ հարցը Բեզի և ինձի, ո՛վ Հա՛յ հաւատացեալ: Չարդարացնենք մենք զմեզ պատրուակելով ներկայ Բաղափական չար և յարափոփոխ կացութիւնը: Յիսուս Մանուկի ծննդեան ջրջանի իջխանները անգույթ բռնապետներ ու վայրագ զինուորականներ էին, փառամոլ թագաւորներու միահեծան դարաջրջանն էր: Յիսուս երբ ծնաւ, մարդ էակ ոչ թէ միայն թիւ մըն էր, այլ թիւ

անգամ չուներ:

Որքան նշանակալից կը դառնայ երբ դիտենք այցելուները՝ մեր Տիրոջ Յիսուսի Ծնունդին: Առաջին երկրպագուները՝ անբան անասուններն են, յետոյ՝ կու գան պարզ և միամիտ հովիւները, և ամենէն յետոյ կու գան իմաստասեր և գիտութեան բանալիները կրող Մոգերը:

Յիսուս Բրիստոսի Ծնունդը, Անոր Մարդեղութիւնը, Խաչելութիւնը և Թագաւորութիւնը մարգարեացուած էր ոչ միայն Հրեայ ազգին սրբազան մատենագրութեան մէջ, այլ նաեւ Հռոմայեցի բանաստեղծ Վիրգիլիոսի տաղերգութեանց մէջ: "The Eclogues, Georgics and Aeneid of Virgil"-ի 4րդ բանաստեղծութիւնը յանձնարարելի է կարդալ, տեղեկանալու համար, թէ Աստուած, մարդկութիւնը անտեղեակ չէ ձգած, այլ յայտնացոյց ըրած է Ինքզինք համայն աշխարհին:

Բանաստեղծ Վիրգիլիոսի մարգարեութենէն Բանի մը հակիրճ տողեր.

*Արջալոյսող ոսկեղար մը, ուր արդարութիւն պիտի գայ
երկինքէն:*

Երբ Միածին մանուկը պիտի իջնէ երկինքէն:

*Այս մանուկին ծնու նդով, աշխարհի սրտերը պիտի փրկուին և
պիտի ժառանգեն երկիրը:*

Մարդկութիւնը պիտի փրկուի իր դարաւոր մեղքերէն ու սրբուի:

*Այս մանուկը պիտի թագաւորէ երկրի վրայ, իր հօր առաջնու-
թեամբ և խաղաղութեամբ:*

9. Յովհաննէս Ա.1-14:

Յովհաննէս Աւետարանիչ կը Բողագերծէ խորածածուկ խորհուրդը Յիսուս Բրիստոսի Ա. Մարդեղութեան և կը ջանայ թափանցել Անոր իսկութեան և նշանակութեան:

Յիսուս Բրիստոսի աստուածՈրդիութեան ջատագովն է Յովհաննէս Աւետարանիչ, որ չ'ուզեր կրկնել նախորդ երեք Աւետարանիչներու պատմագրութիւնը, այլ՝ արծուօրէն կը սաւառնի ներշնչումի Ակնադրբիւրը, իմանալու համար յաւերժական Բանին Ծնունդը և Մարդեղութիւնը, որ պիտի ըլլայ *Կեանք, Ճանապարհ և Ճշմարտութիւն* համայն մարդաշխարհի, լուսաւորելով յաւիտենական կեանքի ճանապարհը Ի՛ր իսկ յաղթական Յարութեամբ:

Յովհաննէս Առաքեալ, Յիսուսի նախասիրած աշակերտն էր: Վերնատան մէջ Ա. Հաղորդութեան ընթացքին, ան գլուխը Յիսուսի կուրծքին դրած էր ու Խաչելութեան մահագոյժ րոպէին իր Վարդապետին կողքին կանգնած կեցաւ: Բաջակորով Յովհաննէս՝ իր աստուածաբանական ջատագովութիւնը կը սկսի,

«Այիզքէն էր Բանը» վկայագրելով: Ան չ'ըսեր մեզի թէ ե՞րբ էր

սկիզբը, ե՞րբ սկսաւ յաւերժութիւնը: Յովհաննէս Առաքեալ կը հաւատայ, թէ ժամանակը գոյութեան կոչուեցաւ Յիսուսի յաւերժական աստուածածնունդով: Նոյնիսկ ներկայ Բաղաճակրթութեան ժամանակագրութիւնը, թէ՛ հաւատացեալներ և թէ՛ անհաւատներ կը հաշուեն Յիսուս Մարդեղեալի՛ն ծնունդով...:

Յովհաննէս Աւետարանիչի նախաբանը Սրբազան Մատենագրութիւններու ամէնէն վսեմ գրուածքներէն մէկն է: Չորրորդ Աւետարանին հեղինակը, գաղտնիներու թափանցելու խիզախ խորացումով, կը յայտնէ իր ընթերցողներուն անձառ խորհուրդներ, որոնց սեմին վաղեմի իմաստասէրները, յափշտակուած ու հմայուած միայն լուռ կը դիտեն:

Յովհաննէս Առաքեալ ոչ միայն իր ավետարանի՛ն մէջ կը ջատագովէ Յիսուս Բրիստոսի աստուածային տեսութիւնը, այլ՝ նաեւ իր նամակներուն մէջ՝ Ա. Յով. Ա.1, ուր ան կ'ըսէ.

«Ան որ սկիզբէն էր, որուն մասին չսեցինք, որուն ականատես իսկ եղանք, որուն նայեցանք, և մեր ձեռները ջօջափեցին կենաց-Բանը».

Յովհաննու Աւետարանին, ներածական 1-18 համարները ոչ թէ թուիչ կ'առնեն մարդկային մտայղացումէն, այլ՝ երկնային ներշնչումէ և ընթերցողին կը յայտնեն աստուածային տեղծագործ գործընթացը:

Վերոյիջեալ 18 համարները կարելի է կոչել *սրբազան երգեցողութիւն*

«Բան»ը՝ Հայր Աստուծոյն իմացական և սիրոյ Ծնունդն է: Միածին Որդի՛ն է յաւիտենական ճարտարապետը աշխարհի: «Բան»ը կը նշանակէ բանականութիւն, մտածողութիւն, դատողութիւն և միտք: Կենդանիները անբան անասուններ են կ'ըսենք: «Բան» կը յատկանշէ նաեւ «խօսք»:
Խօսակցութեան մէջ կ'ըսենք, "սիրուն *բան* մը պատմէ որ մտիկ ընենք, կամ կ'ըսենք "բան խօսիլ" չգիտեր: «Բան»ը՝ մտքին և խօսքին գործադրութիւնը կարելի է համարել:

Աստուծոյ **խօսքին** (Բանին) զօրութիւնը նկարագրող ամենա-յատկանշական համարը կը գտնուի Եսայի մարգարէին ԾԵ. 10-11րդ համարին մէջ.

*«Ինչպէս անէրեւր ու ձիւնը երկինքէն կ'իջնեն և հոն չեն վերադառնար,
Հապա երկիրը կ'ոռոզեն ու զանիկա պտղաբեր և արգասաւոր կ'ընեն,
Ու ցանոտին հոս նոս և ուտոտին հաց կրա տան,
Իսկ բերնէս եղած խօսքն ալ այնպէս պիտի ըլլայ,
Ինծի պարապ պիտի չդառնայ,
Հապա իմ կամքս պիտի կատարէ
Ու յաջողութեամբ պիտի ընէ այն բանը՝ որոս համար զանիկա դրկեցի».*

Խօսքի գորութիւնը, ներկայիս մոռցուած ու փոխանակուած է միայն ենթակային *ստորագրութեամբ*: Նախնիքներու մօտ, արտասանուած խօսքը, ամենանուիրական և ամենաազդեցիկ գորութիւնն էր: Հայր մը երբ օրհնէր կամ անիծէր իր որդին: Եկեղեցին երբ **բանադրեց** Հենրիկոս Գերման թագաւորը, ան բռայիկ և հետիոտն ապաշխարեց որ անէծքը իր վրայէն շնջուի:

Արտասանուած խօսքին «Բան» գորութեան, ոմանք, այսօր իսկ կը հաւատան, օրինակի համար, կախարդական կարգ մը հմայական խօսքերու, գրութիւններու և աղօթքներու: Որովհետեւ, խօսք մը երբ արտասանուի, այդ արտասանուած խօսքը ինքնին կը ստանայ իւր գորութիւնը և նշանակութիւնը: Այս պատճառաւ բարկութեան մէկ բուստին արտասանուած խօսքի մը--բառի մը համար կ'ըսենք, «խօսքդ **էտ տո**»:

Խօսքին գորութեան ականատես կ'ըլլանք երբ հոգեւորականի մը օծումը և անոր կարգին բարձրացման արարողութեան ներկայ կ'ըլլանք ու կը լսենք օրհնութեան ու սրբագործումի ներբողանքը:

Աստուածաշունչ Մատենագրութենէն զատ կամ դուրս, «Բան, Խօսք» բառերը, Քրիստոսէ 500 տարիներ առաջ, Եբեսացի Հերակլիտ գործածած էր--"Լոկոս" բառը՝ Յունարէն գրականութեան մէջ որպէս "տրամաբանութիւն, դատողութիւն, պատճառաբանութիւն կամ օրէնք": Հերակլիտ բազմահմուտ իմաստասէր մըն էր, կատարած էր բազմաթիւ ճամբորդութիւններ և իր ազգակիցներուն կողմէ կը կոչուէր "հայր բնագանցութեան" (metaphysic): Այգքնական դարերուն Քրիստոնեայ Հայրապետներ զինք կը նկատէին հեթանոսներու մարգարէն՝ իր աստուածայայտնիչ տեսութիւններուն համար: Ան կը հաւատար *մտածողութեան*, որպէս ելակետ մարդկային ճանաչողութեան: Մակայն Հերակլիտ չկրցաւ ըմբռնել թէ **գերագոյն և բարձրագոյն մտածող Աստուած մը կայ**:

Ստոյիկեան իմաստասիրութեան մէջ եւս, Բանը (Լոկոս) բարեջրջուեցաւ ու դարձաւ աշխարհը կտրակարող *տրամաբանութիւն*: Հելլենական իմաստասիրութիւնը երբ դէմ հանդիման եկաւ Եգիպտոսի և Միջին Արեւելի բազմապիսի կրօններու և հաւատալիքներու հետ, որոնող իմաստասէր բանաստեղծներ, հակադրութեամբ ու յարաբերական մտածողութեամբ, համահաշտեցուցին (syncr-etized) նախաքրիստոնէական հակոսնեայ կրօնական սոյն դրութիւնները և կոչեցին զանոնք "Արեւելեան Թափնագիտութիւն":

Համարուեալ սոյն կրօններն ու հաւատալիքները ի վերջոյ դարձան ինամիական և իրենց շահագրգռութեան առարկան եղաւ մարդ անհատին *փրկագործութիւնը*: Այդ շրջանի որոնողներուն աշխարհաըմբռնումը թէ՛ տխուր էր և թէ՛ յուստես: Անոնք կը հաւատային գերագոյն աստուածութեան մը (ոչ անձնական կամ անհատականութիւն ունեցող **Աստուծոյ** մը) որ անըմբռնելի և անթափանցելի է:

Վերոյիջեալ մտածողութեան և իմաստասիրութեան տարածութեան մէջ

կ'ապրէր մարդկային տենչանքը երբ Ճշմարտութիւնը, Ճամբան և Կեանքը Մարդացաւ ու ծնաւ Բեթղեհեմի մտւոյին մէջ: «*Կեանքը Անով էր ... Եւ կեանքը լոյս էր մարդոց*»-ը կրնայ նաեւ նշանակել, "Ի՛նքն էր կեանքը", կամ "Ի՛ր մէջ էր կեանքը":

Կեանքը՝ աճում և բազմացում կը նշանակէ: Լոյսը՝ եթերի չափազանց արագ թրթռացումն է, որ կը նշանակէ ուժ, զօրութիւն և կեանք: Ուստի Լոյս և Կեանք, համահաւասար իրականութիւններ և խորհրդաւոր նմանութիւններ են: Վերոյիշեալ պատճառաւ, Յիսուս յայտարարած է ըսելով.

**«Ես եմ աշխարհի լոյսը»--Յով. Ը.12,
«Ես իսկ եմ ... Կեանքը»--Յով. ԺԱ.25**

Յիսուսի «Կեանք» և «Լոյս» խօսքերը, թէեւ կողմնակի մատնա- նշումներ են մեր ամենօրեայ ապրումին ու արեգական լոյսին, սակայն Անոր վկայախօսքերը, ոգեկան ներհայեցողութեամբ կը թափանցեն մարդ էակին իմացողականութեան ու կը բարձրացնեն զինք աննիւթական ու հոգեկան եզրերու: Կեանքն ու Լոյսը կը նշանակեն կենսազգացում, խայտանք և արդիւնաբերութիւն: Մարդիկ կան, որոնց աչքերէն կը ցայտեն խանդավառութիւն, կեանք ու եռուզեռ: Կան նաեւ աչքեր, որոնք կը խամրեցնեն ու կը վշտացնեն զիրենք դիտողները:

Մարդեղեալ Բանն Աստուծոյն երբ կը ջրջագայէր Հրեաստանի բազմապիսի ժողովուրդներուն մէջ, ականատես եղաւ մարդկութեան տխուր, յուսահատ և յուսախաբ մտակերպարանքին: Կեանքի և Լոյսի Իսկութիւնը եղող Յիսուս, Ճարտարապետն է տիեզերքի գերագոյն և գեղեցկագոյն մարդ-արարածին: Ի տես մարդոց թախծադէմ ու անմխիթար աչքերը, **(որովհետեւ առեւանգուած ու պատանդը դարձած էին խաբեքայ Սատանային)**, Յիսուս՝ Իր ողորմած նայուածքով և յուսադրիչ աղաղակով ըսաւ համայն մարդկութեան,

«Ես եմ աշխարհի Լոյսը, Ես իսկ եմ Յարութիւնը և Կեանքը»:

«Անկայն մարդիկ խաւարն աւելի սիրեցին՝ Բան Լոյսը, որովհետեւ իրենց գործերը չար էին»--Յով. Գ.19:

Յիսուս Զրիստոսի հաւատքը, կենսազգացումը ու սերը այնքան զօրեղ և անսպառ են մարդկութեան հանդէպ, որ Ան սիրեց իրենները, որ աշխարհի մէջ են,

«Իսպառ սիրեց զանուն»--Յով. ԺԳ.1:

Յիսուսի Լոյս-Կեանքը այն հրաշագեղ ակնաղբիւրն է որուն սերը միայն *սպառելով* կը դառնայ անսպառ:

**«Եւ Լոյսը կը լուսաւորէր խաւարին
մէջ. և խաւարը չճանչցաւ զայն»:**

Կրօնական հասկացողութեամբ, Լոյս և խաւար կը յատկանշեն երկու *հակադէպ* և ոչ հակամարտ հիմնակէտեր բարիի և չարի: Բարին և չարը հակադրութիւններ պէտք է սեպուին և ո՛չ հակամարտութիւն, որովհետեւ բարին *ներգործական* է ու չարը *կրաւորական*: Խաւարը չի՛ կրնար վանել Լոյսը որքան ալ մութ ըլլայ ան, սակայն Լոյսը կրնայ վանել խաւարը և յայտնաբանել անոր պատրանքն ու նենգութիւնը, որովհետեւ Լոյսը շարժունակութիւն է ու ներգործութիւն, իսկ խաւարը անշարժութիւն է և մահ: Ա՛յս պատճառաւ Յիսուս Քրիստոս եկաւ աշխարհ որպէս Պարգեւիչը Լոյսի և յաւերժութեան: Իր Առաքելութիւնը հիմնուած չէ կրաւորական անշարժութեան վրայ, այլ՝ շոգիին ջարժիչ և ետու՛ն զօրութեան:

Լոյսի կենսալիր և կենսապարգեւ յատկութիւններուն համար, չայ հաւատացեալ պատմագիրներ անուանեցին Անակ-ի որդին Գրիգորը՝ չայ Ազգին *Լուսաւորիչը*: Չայ ազգը՝ հեթանոս գրադաշտակա՛ն կրօնի մէջ ալ հաւատացողն էր գերագոյն *աստուածութեան*, սակայն անտեղեակ էր աստուածութեան մէջ գոյ եղող *Աստուծոյն*, որ համակ Սէր է, Ողորմութիւն և Թողութիւն մեղաց և Պարգեւիչը յաւիտենական Կեանքին:

**«Յովհաննէս Մկրտիչ՝ Լոյսը չէր, այլ եկած
էր, որպէսզի վկայէ Լոյսին համար»--8:**

Որքան անհրաժեշտ է ու կենսական, զատորոշել Յիսուսը՝ Իր սուրբ առաքեալներէն և Իր շուրջի մարտիրոսացած հաւատարիմներէն: Աւետարանագիր Յովհաննէս, որպէս Առաքեալ, կը ջանայ ճշդել Յիսուս Քրիստոսի դիրքաւորումը և դերը որպէս Լոյս և Աստուածայայտնութիւն: Յաճախ, հաւատացեալներ, չեն զանազաներ Յիսուս Քրիստոսը տարբեր սուրբերէ և մարտիրոսներէ և իրենց աղօթքը և նուիրումը՝ փոխանակ ուղղելու Աստուծոյ և անոր Միածին Որդւոյն անունով, կ'ուղղեն այլազան նահատակ սուրբերու:

**«Ան էր Ճշմարիտ Լոյսը, որ կը լուսաւորէ
ամէն մարդ, որ աշխարհ պիտի գայ»--9:**

Յիսուս՝ Ի՛նքն է Ճշմարիտ Լոյսը, իսկ Իր առաքեալներն ու հաւատարիմ սուրբերը, *ցուցանիչներն*. Են Ճշմարիտ Լոյսին և Արեգակն Արդարին:

**«Ան աշխարհի մէջ էր, և աշխարհ անով եղաւ,
սակայն աշխարհը չճանչցաւ զԱյն»--10:**

Իւրաքանչիւր անհատի մէջ է Յիսուս և Իր Հոգիին-շունչովը, մեզ Իրե՛ն կերպարանակից կը ջանայ դարձնել:

Յիսուս Ինք նախաձայնած էր աշխարհին, Մատթէոս Աւետարանագիրի սուրբ ձեռագրով.

**«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի քանի որ իմ այս փոքրիկ
եղբայրներէս մէկուն ըրիք՝ Ինձի՛ ըրիք»--Մատթ. Իե.40:**

Կայծ պատկերա-կնիքը որ ամէն մարդ-էակ կը կրէ իր հոգւոյն մէջ, ներկայութիւնն է Յիսուս Բրիստոսի: Մեր պատասխանատուութիւնն է, **ճանչնա՛լ** Ձինք:

Որքա՞ն կը ճանչնանք Յիսուս Բրիստոսը, և որքա՞ն կը յարաբերուինք Իր հետ աղօթքով և խորհրդաբանելով:

«Իրեննեղու ն եկաւ, բայց իրեննեղը չընդունեցին զԱյն»--11:

Յիսուս հաւատարիմ է Իր խոստման և գործառնութեան մէջ: Ան կու գայ նախ *իրեննեղու ն* անոնց որ Իր անունով մկրտուած ու կնքուած են, անոնց որոնք կը պաշտպանեն Եկեղեցին սակայն չեն յաճախեր, անոնց որոնք կը պարծենան Իր փիլիսոփայութեամբ, սակայն չե՛ն հաւատար Իրեն: Միթէ վերոյիջեալ կրօնական դրութիւնը ՉՈրդ դարու ողբերգութիւնը չե՞՞ Բրիստոնեայ կոչուած ազգերուն:

**«Իսկ անոնք որ ընդունեցին զԱյն՝ իշխանութիւ ն տուաւ
անոնց ըլլալու Աստուծոյ որդիներ, անոնց՝
որոնք կը հաւատան իր անունին»--12:**

**10. Յիսուս չ'ուրանար և չի սատար Իրենները (անուանեալ
Քրիստոնեաները):** Յիսուս անոնց համար կու լայ ինչպէս լացաւ
Երուսաղէմի վրայ: Յիսուս երբ մօտեցաւ, տեսնելով քաղաքը՝ լացաւ անոր
վրայ և ըսաւ.

**«Եթէ գիտնայի՛ր դուն, գոնէ այս օրերուն, քու խաղաղու-
թիւնդ, բայց հիմա ան թաժկուած է քեզմէ... Պիտի նեղեն
քեզ ամէն կողմէ և հիմնադասակ պիտի ընեն քեզ ու քու
մէջդ՝ քու որդիներդ, և քար քարի վրայ բնաւ պիտի չձգեն
քու մէջդ, քանի որ չգիտցար քու այցելութեանդ ժամա-
նակը»--Ղուկ. ԺԹ.41-44:**

Յիսուս ոչ թէ կը պատժէ կամ կ'անիծէ Երուսաղէմացիները, այլ կը

նախաձայնէ ապագան: Կը զգուշացնէ ենթական իր սխալ ընթացքէն, որ չկործանէ ինքզինքը: Ան կ'երթայ շնորհելու Ինքզինք՝ *ուրիշներուն*, անոնց որոնք իմաստութիւնը և ազատութիւնը ունին հաւատալով Իրեն:

Յիսուսի մօտեցումը, յարատեւօրէն, եղած է տալով համար, շնորհելով համար, անպայմանօրէն և անսակարկ: Անոր դիտաւորութիւնը շարունակ եղած է բարի, ու այդ նպատակին վախճանն է դարձնել *հողատէի* մարդկութիւնը «Աստուծոյ որդիներու»: Ինչ առանձնաշնորհեալ Կատարելութիւն:

«Անոնք ո՛չ արիւնէն, ո՛չ մարմնի կամքէն և ո՛չ ալ մարդու կամքէն, այլ Աստուծով է ծնան»--13:

Արիւնէ, մարմինէ և մարդու կամքէ բոլոր ծնունդները որոնց նախանիւթը հողն էր, իրենց մէջ կը կրէին վայրի և անտաշ բնութեան կոյր և բիրտ մղումները: Յիսուս չեկաւ գերեվարելու մարդը և չարաշահելու զայն, այլ զայն վերածելու հոգեղէնի՝ և ընդունելի երկնայիններու դասին մէջ: Նոյնն է նաեւ առաքելութիւնը եկեղեցիին: Ան կը սորվեցնէ մեզի մեր ծագումը, իսկութիւնը, ճամբան ու վախճանը: Մեզ կը վարժեցնէ ու կը դաստիարակէ այն կոչման և նուիրումին, որուն համար ծնած ու մկրտուած ենք, այն հաւատքի՝ն՝ որուն համար մեր ազգը զոհած է իր արիւնը և այդ արիւնով և հաւատքով իսկ շաղախած է կառոյցը իր եկեղեցիներու «Անլուելի զանգակատուներուն»:

11. «Եւ բանը մարմին եղաւ ու բնակեցաւ մեր մէջ»--14:

Անոնք որոնք մտածումի և գաղափարական տեսութեան կու տան մարմին ու շօշափելի իրագործում, կը կոչուին հանճարներ և տաղանդաւորներ: Իսկ բարին, սէրն ու ողորմութիւնը երբ մարմնանայ և ապրի որպէս բարութեան մարմնացեալ Անհատականութիւն, երկնառափ Պատուիրակը զայն կը կոչէ *էմմանուէլ* (Աստուած մեր մէջ):

Անբովանդակելին երբ մարմին կը դառնայ, այդ իսկ ապացոյց մըն է, որ մարդկային արարչագործութիւնը նախասահմանած էր մարդը՝ յաւերժութեան ձիրքով: Յիսուս՝ մեր Տէրը, ո՛չ թէ մարդկայինին վրայ աստուածութիւն զգեցաւ, այլ **Ի՛նք** որպէս Աստուծոյ Միածինը՝ *մարդացաւ* «անթերի մարդկութեամբ»: Ան եղաւ համաշունչ միակամութիւն երբ յանձնեց իր կամքը չօրը ձեռքը ըսելով.

«Հայր իմ, եթէ անկարելի է որ այս բաժակը անցնի առանց իմ խնելուս՝ բու կամքդ ըլլալս»--Մատթ. ԻԶ.42:

Ճառագայթող յաւերժաբոյր Ճշմարտութիւն՝ Միածին Որդին «Եղել մարմին»: Նոյն մարդեղութիւնը պատմութեան մէջ կերտեց ո՛չ թէ մեծագոյն դարձակէտը ժամանակագրական *թուանիշին*, այլ նաեւ անկիւնադարձը մարդկային *մտածելակերպին*:

Մինչեւ երեւումը Բանին Մարդեղութեան, հեթանոս աշխարհը դարեր շարունակ, որոնած էր աստուածութեան հովանաւորումը կամ ինսամատարութիւնը մարդկային և անասնական կերպաւորութեան ներքեւ: Ըլլան անոնք ոսկեզոծ Անահիտ, Աստղիկ և Արտեմիս դիցուհիները, կամ Ապոլոն, Չեւս և Մերաքիս աստուածները:

Քրիստոնէական դարաշրջանին սկիզբէն առաջ բոլոր կրօններու մրցակից աստուածները, կը նկատուէին աստուածութիւն **զգեցած** կամ աստուածային հոգին ստացած աստուածութիւններ: Միայն Քրիստոնէական կրօնին մէջ է, որ Աստուած կը խոնարհի, կ'ողորմի մարդկութեան և կ'առաքէ Իր Միածին Որդին Յիսուս ու զԱյն կը Մարմնացնէ:

Մարդեղութեան (Բանը Մարմին եղեւ)-ի իսկական նշանակութիւնն ու նպատակը, աստուածայայտնիչ փրկագործութիւնն է: Յունա-Հռոմէական, Արեւելեան և Եգիպտական թափնագիտական խորհրդապաշտ կրօնները՝ աստուածութիւնը ծայրայեղօրէն վեհ, գերազանց և *անատոջելի*: և *անհասկնալի* դարձուցած էին:

Յիսուս՝ Իր Մարդեղութեամբ, մարդկային ըմբռնումի մէջ զԱստուած մարդացուց--ջօջափելի և *հասկնալի* դարձուց: Անկապտելի զօրութեամբ, Յիսուս՝ Իր ապրումէն հորիզոն մը բացաւ մեր սրտերուն մէջ և ժամանակաւորը կամրջեց Յաւիտենականին: Յիսուս՝ Իր անձին և ապրումին միջոցաւ ցոյց տուաւ Աստուծոյ սիրոյ Դիմագիծը և փոխակերպեց Մագդաղենացի մեղաւորը սրբուհիի և ազահ դրամապաշտ Չակֆէոսը անձնագործ ողորմածի:

Վերոյիջեալ հրաշագործութիւնները իրականութիւններ դարձան, որովհետեւ **«Բանը Մարմին եղաւ»** և նաեւ **«բնակեցաւ մեր մէջ»**: Յիսուս՝ փոխակերպելէ յետոյ մարդ էակը, չթողուց զայն ու չմեկնեցաւ, այլ բնակեցաւ անոնց մէջ: Ան դարձաւ յաւիտենական **Էմմանուէլ**--հաւատացեալներու ներսիդին Բնակողը:

«Մենք տեսանք անոր փառքը, որպէս ջնորհով և ճշմարտութեամբ լի միածնի փառք՝ ստացուած Հօրմէ»--14

Առաքեալները ճշմարտապէս ականատես եղան իրենց երկնաւոր Վարդապետին փառքը Թափոր Լեռան վրայ երբ պայծառակերպեալ Յիսուս յայտնեց Իր վեհափառութիւնը և Աստուած խօսեցաւ, ըսելով.

«Ատիկա՛ է իմ սիրելի Որդիս, որուն հաճեցայ ատո՛ր մտիկ ըրէլ»--Մատթ. ԺԷ.5:

Աստուած, մասնաշատուկ նպատակաւ մատնանիջ ըրաւ աշակերտներուն մտիկ ընել Իր Որդւոյն, որովհետեւ Հին Կտակարանի մարգարէները չէին կրցած ճանչնալ Ձիւնք: Անոնց աստուածճանաչումը մոռալ էր և աղօտ: Աստուած փափաքեցաւ Իր Միածնի՛ իմաստաւորութեամբ յայտնաբանել Իր

սերը և դրսեւորել Իր ողորմութիւնն ու շնորհը: Աւետարանաշունչ Յովհաննէս Առաքեալ կը վկայէ իր տեսածն ու լսածը սապէս.

«Օրէնքը Մովսէսի միջոցով, իսկ շնորհն ու ճշմարտութիւնը (Իրականութիւնը) Յիսուս Բրիստոսի միջոցով եղան»--17

Մովսէսի ձեռնով սրուածը՝ Օրէնքն ու դատաստանը կը ներկայացնէին՝ *պատժակա՛ն*, Աստուածը: Սամուէլ մարգարէին Աստուածը՝ կը ներկայացնէր՝ պատերազմի՛ Աստուածը: Սամուէլ մարգարէ հրամայեց Ամաղէկ ազգին ցեղասպանութիւնը:

Եղիա մարգարէին Աստուածը՝ կը ներկայացնէր փոխ-վրէժի՛ Աստուածը: Ան՝ իր ազգա-կրօնական հաւատքը ծայրայեղ մոլեռանդութեան Բշած էր: Հանդուրժողութիւն չէր գիտեր: Իր հրաշագործ գոհաբերութեամբ յաղթապանծ, ան հրամայեց, ըսելով.

«Բռնեցէ՛ք Բահողի մարգարէները, ու անոնցմէ՛ մարդ չ՛ազատի. և զանոնք բռնեցին, ու եղիա զանոնք կիսոն հեղեղաօր իջեցուց, և հոն զանոնք մեռցուց»

--Գ. Թագ. ԺԸ.40:

Դժբախտաբար Եղիա մարգարէին սոյն ընթացքը, որպէս կրօնական օրինաւոր չափանիշ ընդօրինակուեցաւ թշուառական Խաչակիրներու կողմէ ընդդէմ Իսլամներու: Նոյն սխալանքի թակարդը ինկան նաեւ Սպանացի կղերն ու արծաթասէր Բրիստոնետաները երբ գրաւեցին Հիւսիսային և հարաւային Ամերիկաները: Մինչ Յիսուս Բրիստոս ներկայացուց *սիրոյ՛* ողորմութեան և շնորհի՛ Աստուածը:

Աշխարհի դատաստանական օրէնքները ենթակայ են անարդար և անիրաւ վճռահատութեան: Երամն ու կողմնակցութիւնը, կրնան շեղել իրաւունքը: Տգիտութիւնն ու մոլեռանդութիւնը, նախապաշարումը և փառամոլութիւնը, ըստ Աւետարանաշունչ վկաներուն, խաչքամեցին Ճշմարտութիւնը և «կենսազրկեցին *Կենսատու նա՛*»:

Առանց Յիսուս Բրիստոսի մարմնաւորուած առաքելութեան, աշխարհ տակաւին պիտի տատանէր խաւարի մէջ առանց հասնելու Ճշմարիտ իրականութեան և շնորհի: Ճշմարտութիւնը անկաջառ է և շնորհի վճիռը՝ մի միայն ազատութիւն է: Միթէ կարելի՞ է մէկու մը կեանքը կամ պարտքը շնորհել բանտարկելով կամ սպաննելով գինքը...: Ո՛չ երբեք:

Կրօնա-իմաստասէր աղանդաւորներու աշխարհաըմբռնումը, ջատագոված էր *մարմնի և նիւթի* մեղանչականութիւնը և միայն հոգւո՛յն սրբութիւնը կը գերադասուէր: Բազմաթիւ կրօնքներ, մարմինը նկատած էին ակնադիւրը մեղքի: Բրիստոնէական սկզբնաշրջանին, Կնոստիկեան և Մանիքեական աղանդապաշտներ, Պղատոնեան ու Արեւելեան ըմբռնումով չկրցան հաշտուիլ և հաւատալ թէ Աստուծոյ Միածին Որդին *«մարմին եղաւ»*:

Վերոյիշեալ աղանդները կոապաշտական կամ Մատանայական չէին նկատուեր, այլ սրբակենցաղ և բարի կենցաղավարութեամբ մրցորդները Զրիստոնէութեան: Աբ. Օգոստինոս, նախ քան դարձը Զրիստոնէական Լոյս հաւատքին, հետեւողն էր Մանիքեական աղանդին: Յովհաննէս Առաքեալ՝ իր աւետարանչութեան մայրամուտին երբ հանդիպեցաւ Կնոստիկեան և Մանիքեան ֆարոգիչներու, իր ներշնչեալ գրիչը թաթխեց մելան կաղամարին ու յաւերժական հոգիով արձանագրեց.

«Մենք Աստուծոյ հոգին կը ճանչնանք ասով. ամէն հոգի որ կը խոստովանի Յիսուս Զրիստոսը մարմինով եկած՝ ան Աստուծմէ է: Եւ ամէն հոգի որ չի խոստովանիր Յիսուս Զրիստոսը մարմինով եկած՝ ան Աստուծմէ չէ»--Ա. Յով. Գ.3:

Ծնորհի և ճշմարտութեան **(իսկուրեան)** յայտնաբերումը ցարդ կատարուած էր վերացական և իմաստասիրական հայեցողութեամբ՝ չեղլեն իմաստասերներու միջոցաւ: Անգէտ ու անգրագէտ մարդկութեան մեծամասնութիւնը կարիքը ունէր շօշափելի և առարկայական յայտնութեան: Աստուած խոնարհեցաւ և յայտնեց Ինֆզինք Յիսուս Զրիստոսի Մարդեղացեալ ապրումով, ո՛չ որովհետեւ *ստիպուած* էր, այլ որովհետեւ *սիրած* էր Ի՛ր մարդ-արարածները:

Յովհաննէս Առաքեալ նախ քան մայրամուտ մտնելը իր խոր ծերութեան, կը ջարժէ լուսեղէն գրիչը ու կը վկայէ.

«Ան որ սկիզբէն էր, որուն մասին լսեցինք, որուն ակնատես իսկ եղանք, որուն նայեցանք, և մեր ձեռները շօշափեցին կենաց բանը--քանի որ կեանքը յայտնուեցաւ, և մենք տեսանք, կը վկայենք ու կը պատմենք ձեզի յաւիտենական կեանքը՝ որ Հօրը մօտ էր և յայտնուեցաւ մեզի--Չայն է որ տեսանք ու լսեցինք և կը պատմենք նաեւ ձեզի, որպէսզի դուք ալ հաղորդակից ըլլաք մեզի հետ. և մեր հաղորդութիւնը Հօր հետ է և Անոր Արդիին՝ Յիսուս Զրիստոսի հետ: Այս բանը կը գրենք ձեզի, որպէսզի կատարեալ ըլլայ ձեր ուրախութիւնը»--Ա. Յով Ա.1-4:

***Զրիստոս ծնաւ և յայտնեցաւ,
Չեզի մեզի մեծ Աւետիս:***

**Դեկտեմբեր 27, 1990
Թորոնթօ**